

Ս Պ Ք Տ

ԴԳՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՈՑ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՒՆԻ

ԵԴՄՈՆԻ ՏԷ ԱՄԻՉԻՍԻ

(ՏԵՍ ՀԱՏ. ԻԵ. ԵՋ 145)

Սարդիացի բնրկահարճ

(ԱՄՍՐԵԱՅ ԱՄՈՒԹԻՒՆ)

Կուստոզայի պատերազմին առաջին օրը, 1848 տարւոյ յուլիս ամսոյն Չեխն, մեր բանակին հետեակամարտ զօրաց զնդի մը վաթսուների չափ զինուորքը, զրկուելով բարձրաւանդակի մը վրայ առանձնացեալ տան մը տիրապետելու, յանկարծական բռնուեցան յարձակմանց աւստրիական զօրաց իրկու խմբերէ, որք հրանօթ վինուք հարուածելով զանոնք զանազան կողմերէ, հաղիւ կրցան պատսպարուիլ տան մէջ և փութով փակել զոները, յետ թողոյքանի մի մեռեալք և վիրաւորք 'ի դաշտս: Գոները փակելէն վերջ, զիմեցին մերքն 'ի պատուհանս զեանասրահին և առաջին յարկին, և սկսան խիտ առ խիտ կրակ ձգել յարձակողաց վրայ, որք հետզհետէ կիսաբոլորած և տան մերձենալով, ուժգնաբար կը փոխանակէին անոնց հարուածոց: Խտաւական վաթսուն զօրաց կը հրամայէին երկու ստորակարգ սպայք և ձերուների գնդապետ մը վտիտ և խիտ, սպիտակ հերօք և պերեեշտօք. և անոնց հետ կայր սարդիացի թմրկահար մը որ գրեթէ տասնըչորս տարուան պատանի մ'էր, և հաղի տասուերկու կը ցուցնէր, փոքրահասակ, ձիթագոյն և թուխ դիմօք, երկու սեաւ և խոր փոքրիկ փաւլիլուն աչօք: Գնդապետը առաջին յարկին սենեկէ մը կ'առաջնորդէր պաշտպանողաց, հրամաններ արձկելով նման հարուածոց ոտբճանակի, և նորա երկաթնայ դիմաց վրայ բնաւ կարեկցութեան նշան մը չէր նշմարուէր: Թմրկահարն սակաւ մի տօգունեալ, այլ հաստատուն իւր սրունից վրայ, ստուլի մը վրայ ելած՝ որ մունքն բռնելով կ'երկարէր պարանոցը պատուհաններէն դուրս նայելու համար, և ծխոյն մէջէն կը տեսնէր 'ի դաշտս Աւստրիացոց սպիտակ խմբերն՝ որք յուշիկ յառաջ կու գային: Տնակն կայր դարեւանդի մը գազաթան վրայ, և զառ 'ի վայրին կողմը մի միայն բարձր պատուհանիկ մ'ունէր՝ ձեղուան սենեկի մը մէջ. անոր համար Աւստրիացիք այն կողմէն չէին սպառնար տան, և զառ 'ի վայրը անվտանգ էր. կրակը՝ միայն տան ճակատը և երկու կողմանքն կը հարուածէր:

Սակայն դժոխային կրակ մ'էր, կապարեայ գնդակաց տարափ մը, որ արտաբուստ կը կործանէր պատերը, կը փշէր կղմիւտորները, իսկ ներքուստ կը ջախջախէր ձեղունները, կահ կարասիքն, պատուհանները, զաները, յօգս ցրուելով փայտի բեկորներ, աւերակաց ամպիր, և անօթոց և ապակեայ կտորներ, չչելով, ուստուցանելով, ամենայն ինչ խորտակելով այնպիսի շառաչմամբ՝ որ գանկը կը ճեղքէր: Պատուհանէն հարուածածիգ զինուորներէն մին մերթ ընդ մերթ յետ յատակին վրայ կը տապալէր, զոր մէկ կողմը կը բաշէին: Ոմանք ձեռօք սեղմելով իրենց վէրքերն՝ սենեկէ 'ի սենեակ կը դանդաւայէին: Խոհանոցի մէջ արդէն իսկ մեռեալ մը կար՝ ճեղքեալ ճաւկատով: Թշնամեաց կիսաբոլորք երթալով կը սեղմուէր:

Գնդապետը որ մինչև այն ատեն անխռով կեցիր էր, անհանգստութեան նշան մը տալով, յանկարծ մեծաքայլ սենեկէն գուրս ելաւ, որուն ետեւէն կ'երթար պաշտօնեայ մը: Երեք վայրկեանէն վերջ պաշտօնեայն ետ դարձաւ և նշանացի կոչեց զԹմրկահարն որ իւր ետեւէն գայ: Պատանին փայտեայ սանդուխէ մը վեր վագելով ետեւէն գնաց, և անոր հետ 'ի միասին դատարկ ձեղուն մը մէջ մտաւ, ուր տեսաւ զգնդապետը որ պատուհանին յեցած՝ կապտերայ գրչաւ թղթի մը վրայ կը գրէր, և գետինը իւր ստիցն առջև ջրհորի շուան մը կար:

Գնդապետը ծալլեց զթուղթն, և իւր գորշագոյն և ցուրտ արտեանունքն տղուն աչացը մէջ սեւեւելով, որոյ առջև կը դողային ամենայն զինուորք, դաժանութեամբ մ'ըսաւ. — Թմրկահար:

Թմրկահարը ձեռքը զլիսուն տարաւ:

Ըսաւ գնդապետն. — Արխախրտ ես գու:

Տղուն աչքերը շողշողալ սկսան:

— Այո՛, պարոն գնդապետ, — պատասխանեց:

— Հոն վարնայէ, — ըսաւ գնդապետը, զինքը դէպ 'ի պատուհան հրելով, — դէպ 'ի դաշտը, Վիլլաֆրանքայի տանց մօտ՝ ուր շողշողուն հրագէններ կը տեսնուին: Հոն մերինները անշարժ կեցիր են. առ այս տոմսակս, բըռնէ չուսնը, վար իջիր պատուհանէն, երագութեամբ կտրէ զառ 'ի վայրը, անցիր դաշտաց մէջէն, հասիր մերայնոց, և տուր տոմսակը առջի պաշտօնէին զոր կը տեսնես: Մէկդի ձգէ կամարդ և մախալդ:

Թմրկահարը հասնեց կամսան և մախալը, և գտոմսակը կրծոցը վրայի գրպանին մէջ դրաւ. սպան չուսնը գուրս նետեց և երկու ձեռքը անոր մի ծայրէն բռնեց. գնդապետն օգնեց տղուն պատուհանիկէն գուրս ելլելու, կռնակը գէպ 'ի դաշտորայս դարձուցած:

— Նայէ, — ըսաւ իրեն, — գնդին փրկութիւնը քու արխարտութենէդ և երագութենէդ կը կախուի:

— Վստահացիր վրաս, պարոն գնդապետ, — պատասխանեց Թմրկահարն, դէպ 'ի գուրս կախուելով:

— Իջած միջոց խոնարհէ, — ըսաւ դարձեալ գնդապետն, սպային հետ բռնելով զուսնը:

— Մի տարակուսիր:

— Աստուած բեզ օգնէ:

Քանի մի վայրկեանէն Թմրկահարն վար իջաւ. սպան վեր քաշեց զուսնը և անհետացաւ. գնդապետը ուժով դէպ 'ի պատուհանը դիմեց, և տեսաւ զտղան որ կը թռչէր զառ 'ի վայրէն:

Մինչդեռ կը յուսար որ պատանին առանց տեսնուելու յաղողեր էր փախչիլ, և ահա յանկարծ հինգ կամ վեց փողոյ կոյտեր տղուն առջևէն և ետեւէն վեր բարձրացան, որոնցմէ իմացաւ գնդապետը թէ Աստրիացիք տեսնը էին զայն, որք բարձրատեղակին գազաթէն դէպ 'ի նա կ'ուզէին. այն փոքրիկ կոյտերն գնդակներէ յօշս ցրուած հողի կտորուանք էին: Սակայն Թմրկահարն շտապով կը շարունակէր իւր ընթացքը: Յանկարծ յերկիր կործանեցաւ. — Սպանուեցաւ, — գոչեց գնդապետը, խսձնելով բուռը: Սակայն գեռ բառը ըսած՝ տեսաւ որ Թմրկահարն վեր կանգնեցաւ. — Ա՛հ, ընկեր է միայն, — ըսաւ ինքն իրեն և շունչ առաւ: Ի՛շ յիրաւի Թմրկահարն սկսաւ նորէն վազել ամենայն ուժով, բայց կը կազար:

— Ոտքը դալարեր է, — խորհրդածեց ինքնիրեն գնդապետը, Քանի մի փողոյ կոյտեր տղուն չորս կողմը ասդին անգին նորէն բարձրացան, սակայն միշտ

աւելի հեռուէն: Ինքն անվնաս մնացեր էր: Գնդապետը խնդութեան բացառանչութիւն մ'ըրաւ. բայց բնաւ իւր տեսութիւնէն չկորոյս պայն, գողողալով, վասն զի ստիպողական գործ մ'էր. եթէ ամենայն երազութեամբ չկարենար հոն հասնիլ տունակաւն, յորում իսկ և իսկ օգնութիւն կը խնդրէր, կամ իւր բոլոր զօրքերն մտեալ պիտի իյնային, և կամ ինքն անձնատուր պիտի ըլլար և անոնց հետ գերի պիտի բռնուէր: Տղան միջոց մը երազութեամբ կը վազէր, ապա կաղալով քայլերն կը գանդազիցնէր: յետոյ վերտօնն կը սկսէր ընթանալ, սակայն միշտ աւելի յոգնած կերպով, և երբեմն երբեմն կը գթէր, կը կենար: — Թերևս սողացող գնդակ մը իրեն պատահեցաւ, — բայց ինքն իրեն գնդապետն, և սրտազողէն կը գննէր անոր ամէն շարժումներն, և պինքն կը յորդորէր, իրեն հետ կը խօսէր՝ իրրև թէ լսէր նա. վառվառն աչք կը շտփէր անդադար փախչող տղուն և այն շողջողուն զինուց մէջ եղած անջրպետն, զոր կը տեսնար մարգագետնոյն մէջ ի դաշտս ցորենոյ՝ որք անու ճառագայթներէն ոսկեգօծեալ կը շողջողային: Աի և նոյն ժամանակ կը լսէր ստորին սենեկաց մէջ գնդակներու շփումը և շառաչը, պաշտօնակալաց և սպայից խորատ և զայրագին աշտոջակքն, վիրաւորիցը գտոն հեծեմանը, կաճ կարասեաց և ծեփերու գետին կործանելու ձայնն: — Լապա, արիւսցիր, — կ'ազազակէր, զիտելով հեռուոր թմրկահարը, — յառաջ, ընթացիր: Կը կենայ, անհոճալ: Ա՛հ, նորէն կը սկսի ընթանալ: — Պաշտօնակալ մը հատկելով և կառ, թէ թշնամիք առանց կրակն ընդհատելու, սպիտակ կտաւ մը կը ծածանեցնէին, որպէս զի անձնատուր ըլլան: — Ա՛հ պատասխաներ, — գոչեց նա, առանց վերջնելու իւր այրն տղուն վրայէն, որ արդէն իսկ դաշտին մէջն էր, բայց այլ ևս չէր վազէր, և կը կարծուէր թէ դժուարաւ կը բաշխուտը ինքզինքն: — Այլ երթ, այլ լինթացիր: — կ'ըսէր գնդապետն՝ սեղմելով դատամունտն և գրունն. — սպաննուէ՛ք, մտքի չուռակաւն, այլ երթ: — Յետոյ գարհուրելի անէծք մը կարդաց: — Վա՛շ, վատանուն ծոյլ, նստա՛ւ: Ի՛շ յիրաւի, տղան որոյ գլուխը մինչև այն ատեն ցորենոյ գաշտի մը վրայէն կ'երևար, անյայտացեր էր իբր թէ ինկած ըլլար. հուսկ ապա մայառաց ետէր կորսուեցաւ, և գնդապետն այլ ևս չտեսաւ զայն:

Այն ատեն իջաւ ուժգնակի. գնդակներն մրկի պէս կը թօթափէին, սենեակքն վիրաւորելովք լի էին, յորոց ոմանք իբր գինովք իրենք իրենց վրայ կը զառնային կաճ կարասիքն բռնելով. որմունք և յատակն արևամբ բծաւորեալ էին, զիակունք զրանց մէջ տարածուած. տեղապահին ալ բազուկը գնդակէ մը խորտակած էր, ծուխը և փոշին ամենայն ինչ պատեր էր: — Զօրացէ՛ր, — աղազակց գնդապետն:

— Տեղերնիդ հաստատո՛ւն կեցէք: Օգնութիւնք կը հասնին: Զօրացէ՛ք պեռ քիչ մը:

— Աստիացիք մօտեցեր էին վերտօնն. արդէն իսկ կը տեսնուէին ծխոյն մէջ իրենց լսանգարեալ երևոյթն, կը լսուէր հրացանաց շառաչման մէջ անոնց վայրագ աղաղակքն, որ կը թշնամանէին, անձնատուր ըլլալ կը գոչէին, կտորած կը սպառնային: Քանի մի զինուորք ահարեկեայք պատուհաններէ ետ կը քաշուէին, սպայք գանոնք առաջ կը մղէին: Սակայն պաշտպանութեան կրակը հետզհետէ կը նուաղէր, վհատութիւնք ամենայն զիմաց վրայ կը նշմարուէր. անհնար էր այլ ևս կարենալ զիմանալ: Որոշեալ վայրկեանէ մը Աստիացուց հարուածքն զանգաղեցան, որոտուն ձայն մը նախ գերմաններէն և ապա իտալերէն աղաղակեց. — Մնձնատուր եղէք: — Ա՛չ, — մոնչեց գնդապետն պատուհանէ մը: Ի՛շ կրակն առջինէն աւելի ևս խիտ և կատաղի կերպով սկսաւ երկու կողմանէ: Ուրիշ զինուորք ալ ինկան: Արդէն շատ պա-

տուհանք առանց պաշտպանութեան մնացեր էին: Աղէտալի վայրկեանն մտա էր: Գնդապետը աստուծոնց միջէն կիսահագագ ձայնիւ կը գոչէր. — Չեն գար, չեն գար, — և կատաղած չորս կողմը կը վազէր, գողտղոտն ձեռքը թեքելով սուսարաստ 'ի մեռանել: Երբ սպայ մը ձեղունէն իջնելով գոչեց բարձրձայն. — Կը հասնին: — Կը հասնին, — կրկնեց գնդապետն ցնծալից ձայնիւ:

Այն ձայնէն ամէնքն ալ, առողջք, վերաւորեալք, սպայք, պաշտօնակալք պատուհանաց նետուեցան, և ընդդիմութիւնը կրկին անգամ մ'ալ սաստկացաւ: Անկից քիչ վայրկեան վերջը անստուգութիւն և խառնակութիւն մը տիրապետեց թշնամեաց մէջ: Իսկոյն, հապճեպով, գնդապետը գունդ մը կազմեց գետնայարկի սենեկին մէջ, որպէս զի բուռն դուրս յարձակին հրացանոց սլաքներն դէպ 'ի թշնամիս ուղղած. — Յետոյ դարձեալ թաւս դէպ 'ի վեր: Հազիւ թէ հասեր էր, շտապալից ոտից գողտք մը լսեցին, որուն հետ մէկտեղ կը հնչէին ահագին ուրբաներ, և տեսան պատուհանէն որ ծխոյն մէջէն դէպ 'ի յատաջ կու գային իտալական հրացանակրաց կրկնածայր գլխարկքն, ահագին խուճր մը գետնին երեսը սողալով, և կայծակնային շողիւն մը սուսերաց' որք կը տատանէին յօգս, յիցեալք զլիտոց և թիկանց վրայ. — անցան որունցը դունէն դէպ 'ի դուրս յարձակեցաւ վայրահակ սլաքք. — թշնամիք սասանեցան, խառնակեցան, 'ի փախուստ անապարեցին. երկիրը դատարկացաւ, տունն սգաւտ մնաց, և քիչ վերջ երկու իտալական հետեւաւ կամարտս զօրաց մտքեր և երկու թնդանօթք տիրեցին բարձրաւանդակին:

Գնդապետն ինչպիսով զօրք վերստին իւր գնդին հետ միացաւ, նորէն ճակատեցաւ, և թեթև կերպով մը ձախ ձեռքն ցատքուտուկ գնդակէ մը վերաւորուեցաւ՝ սլաքք յետին յարձակման միջոց:

Աւարտեցաւ օրն միւրայնոց յաղթանակաւ:

Սակայն երկրորդ օրը պատերազմն վերստին սկսելով, իտալացիք յաղթուեցան 'ի բազմաթիւ Աւստրիացոց' հանդերձ իրենց քաջասիրտ ընդդիմանալովն, և քսանըվիցին առաւօտը տխուր կերպով ստիպուեցան յետս նահանջել՝ դէպ 'ի Մինչոյի:

Գնդապետն, թէ և վերաւորեալ, զնաց հետիտան իւր զօրաց հետ մէկտեղ խոնջ և լռիկք, և 'ի մուտս արևուն հասնելով Մինչոյի վրայ 'ի Եօիթօ, իսկոյն փնտռեց իւր տեղակալն, որոյ բազուկն կտորած էր և զոր հիւրընկալըն էին մեր Երջազնաց կառքերն, և հարկ էր որ իրմէ առաջ հոն գտնուէր: Ելլուցին իրեն հեկեղեցի մը, ուր ճեպով զինուորական հիւանդանոց մը կանգնեալ էին: Ինքն հոն գնաց, Եկեղեցին յի էր վերաւորելովք՝ որք պառկեալ էին յատակին վրայ դրուած երկու կարգ անկողնոց և մահճաց մէջ: Երկու բժիշկներ և զանազան սպասարարք կ'իրթևեկէին վշտագին, և հեղձամղձուկ ձայնիւ և հառաչանքներ կը լսուէին:

Հազիւ թէ գնդապետն ներս մտաւ, կեցաւ և սկսաւ չորս կողմը նայել փրկուելով իւր պաշտօնակալն:

Նոյն վայրկեանին լսեց որ նուազեալ մերձաւոր ձայն մը զինքը կը կոչէր. — Պարոն գնդապետ:

Գարձաւ, և տեսաւ որ թմրկաչարն էր:

Մահճակալ անկողնի մը վրայ տարածուած էր, — մինչև կուրծքը ծածկուած պատուհանի անհարթ վարագուրաւ մը՝ որ զարգարեալ էր կարմիր և սպիտակ քառակուսի նկարուք. — քաղուկներն դուրս ձգած, տեղոյն և նիհարցած, սակայն միշտ իւր բոցափայլ աչքն՝ նման երկու սեւաւ գոհարներու:

— Դու հոն ես, — հարցուց իրեն գնդապետն զարմացած՝ բայց դաժան կերպով, — Կեցցեն. պարտքդ կատարեցիր:

— Չեռքէս եկածն ըրի, — պատասխանեց թմրկահարն:

— Վիրատուներ ես, — ըսաւ գնդապետն, փնտաելով աջօք իւր պաշտօնակալն՝ մերձակայ անկողնոց մէջ:

— Ի՞նչ ընենք, — ըսաւ տղան, որ իւր առաջին անգամ վիրատուութեամբ ըլլալուն զգացած մեծ ուրախութեանը սրտածառաւ սիրտ կ'ընէր խօսելու, առանց որոյ չի պիտի համարձակէր բիրտնք բռնալ այն գնդապետին առջև:

— Ջանացի միշտ 'ի գետին խոնարհած վազել, սակայն չուտով տեսան գիս: Քանն վայրկեան առաջ կը հասնէի եթէ զիս շտեմնային: Բարեբաղդաբար բարձրագոյն ժողովի գնդապետի մը պատահեցայ՝ որուն յանձնեցի զտոմսակն: Բայց յետ վիրատուելոյս շատ դժուարաւ կրցայ յառաջ երթալ: Եարաւէն կը մեռնէի, կը վախէի որ այլ ևս պիտի չկարենամ հասնիլ: Բարկութենէս կու լայի՝ մտածելով թէ ամէն մէկ վայրկեան գողցերէս մէյ մէկ հոգի անպիի աշխարհք կ'երթար: Բաւ է, կրցածիս չափ ըրի. գոհ եմ: Սակայն խնդրեմ, պարոն գնդապետ, ոչ զիր, արիւնք կը վազէ:

Եւ յիրաւի, գնդապետին վեր 'ի վերանց պատատեալ ձեռաց՝ արեան քանի մի կաթիլք մատերէն վար կը վազէին:

— Պարոն գնդապետ, կ'ուզեն որ պատանքդ քիչ մը սեղմեմ: Մտեցուր վայրկեան մը ձեռքդ:

Գնդապետը մօտեցուց ձախ ձեռքը, և հրկարեց աջն օգնելու որ կարինայ զիրաւ քակել հոնգոյն և վերստին կապել: Սակայն հազիւ թէ տղան գլուխը բարձէն վերցուց՝ գոյնը նետեց, և ստիպուեցաւ նորէն գլուխը կոթընդրնել:

— Բաւական է, բաւական է, — ըսաւ գնդապետը, նայելով անոր, և պատատեալ ձեռքն ետ քակելով՝ զոր նա կ'ուզէր վերստին բռնել. — Դու գործիք նայէ փոխանակ կայսա հոգալու, վասն զի թեթեւ իրերն իսկ՝ անհոգութեամբ կրնան ծանրանալ:

Թմրկահարն ցնցեց գլուխը:

— Բայց դու, — ըսաւ անոր գնդապետն նայելով ուշադրութեամբ, — այսքան տկարանալու համար՝ աչտք է որ քեզմէ շատ արիւն վազած ըլլայ:

— Շատ արիւն վազած ըլլայ. — պատասխանեց տղան ժպտելով մը. — Ի՞նչ արիւն: Տես:

Եւ նոյն վայրկեանին ծածկոցն վրայէն քաշեց:

Գնդապետն զարհուրած քայլ մը յետս ընկրկեցաւ:

Տղան մի սրունք միայն ունէր. ձախակողմեան սրունքը ծնգաց վրայէն կտրեր էին. սրունից կտրուած մասը արիւնոտ լաթերով պատատուած էր:

Նոյն պահուն փոքրահասակ և յոյր զինուորական բժիշկ մ'անցաւ, շտապին թեկերը սօթթած. — Ո՛հ, Պարոն գնդապետ, — ըսաւ երազութեամբ, նշմարելով զթմրկահարն, — տէա դժբաղդ պատահար մը. սրունքն ոչինչ բանով մը պիտի ապառէր, եթէ այնպիսի յիմար կերպով բռնադատելու չըլլար: սրունից անիծեալ բարբոցում մը, հարկ եղաւ իսկ և իսկ կտրել: Ո՛հ, սակայն... կտրիճ տղայ մ'է. ես կը վկայեմ. ոչ արտասուք մը թափեց և ոչ աղաղակ մը հանեց: Կ'երզնում որ մինչպես կ'անդամահատելի՝ իտալացի տղայ մ'ըլլալուն վրայ կը պարծէի: Յիրաւի շատ ազնիւ և քաջասիրտ է: Եւ այնպէս անցաւ գնաց:

Գնդապետն իւր մեծ սպիտակ արտեանունքը կնճռեց, և սեւեռեալ աջօք նայեցաւ թմրկահարին, ծածկոցը վերստին տնոր վրայ տարածելով. և ապա

գրիթէ առանց անդրադառնալու, և միշտ սչքերն տղուն վրայ սեւեռելով, ձեռքը գլուխն բարձրացուց և զլիսարկը բացաւ:

— Պարոն գնդապետ, — գոչեց տղան զարմացմամբ: — Ի՞նչ կ'ընես պարոն գնդապետ: Ինձի համար:

Դոյն պահուն այն տմարդի գինուօրն, որ բնաւ չէր ըսած հեղ խօսք մը իրմէ ստորնագունին, չափէ դուրս գորովայլիւր և քաղցր ձայնով մը պատասխանեց. — Յիրաւի ես գնդապետ մի եմ, բայց դու դիւցազն մ'ես:

Յիտոյ բազուկներն տարածած՝ թմբկահարին վրայ ինկաւ, և երեք անգամ համբուրեց անոր սիրտը:

ՆՈՐ ԶՐՄՈՒՂ ԹԷՈՒՊՈՍԻՈՅ



Թէպէտե երկարաբան շինելու համար ի մէջ չբերինք ատենախօսից ճառերը, այլ անհրաժեշտ հարկ է, տկնարկ մի տալով ընդհանուրին վերայ, ի մէջ բերել հայ ատենախօսին Գ. Հ. Խորէն ՆՐ. Վ. Ստեփանէի, վանահօր Ս. Խաչ վանուց Տաւրիոյ և նախկին աշակերտի Մոսկուայի համալսարանին, ոուս լեզուով խօսածը, (նոյն ինքեան հեղինակին հայերէն թարգմանածը). նախ՝ իբրև հայ մտաց արտադրութիւն, երկրորդ՝ վանդի ըստ իմաստից և ըստ ձևոյն գերազանցեց նա քան զամէն խօսողները, և բուռն ծափահարութեամբ գովեցաւ ամենքէն: Կանգնեցաւ նա բազմութեան մէջ, բարձր հասակաւ և սպիտակ ալեօք, սքողեալ վեղարիւ, ամենայն բառ որոշ հնչելով և վայելուչ ձևերով սկսելով իւր ճառը, ի սկզբան անդ ունկնդրաց վերայ մեծ տպաւորութիւն գործեց: Վայելուչ ձևով՝ բացատրեց նա Ս. Հոգոյն սուրառնիլը ի վերայ ջուրց, խօսեցաւ ջրոյն կենսունակ ազդեցութեանը վերայ յարարածս, և թէ ջուրը նիւթ է խորհրդական ամենայն կրօնից մէջ. չմոռացաւ յիշելու մի բաժակ ջրոյ յանուն աշակերտի տուողին վարձքը, և եթէ նկարագրեալ ջուրը հազարաւոր ձևերով նկարած, ստացել է գերահռչակ անուն, որով և պարծանք է նա Հայ ազգիս. այլ թողունք որ ինքն ատենախօսն բարբառի իւր կովկասեան լեզուով:

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆՆԵՐ ԵՒ ՏԻԿԻՆՆԵՐ

Թոյլ տուէք ինձ հայ վարդապետին ևս քանի մի խօսք ասել այսօրուան հանդէսին առթիւ: Շատերն յաճախ աշխարհից տժգոհութիւն են յայտնում, մինչև անգամ՝ նորան զատարկ են համարում. սակայն